ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ / / Դ.Մելքոնյան

«01» 09 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոռու մարզ քաղաք Վանաձոր

/մարզ, համայնք/

Ս. Զորյանի անվան N22 հիմնական դպրոցի 8-րդ դասարան

/ուսումնական հաստատության անվանում , դասարան/

Ղազարյան Նելլի Սամվելի

/ դասղեկի ազգանուն, անուն, հայրանուն/

2023- 2024 ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) - Դասարանը բաղկացած է 26 աշակերտից,որից ինը՝ տղա, տասնյոթը՝ աղջիկ: Դասարանում տիրում է առողջ հոգեբանական իրավիճակ: Սովորողները ընկերասեր են, փոխզիջող, դասընկերոջը օգնության հասնող:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
   Կարգապահական հարցեր
   Ծնողական ժողովներ
   Հետևել առաջադիմությանը,օգնել ետ մնացողներին
   Աշակերտների մեջ դաստիարակել ընկերասիրություն, փոխադարձ օգնության մթնոլորտ ձևավորել
   Խորացնել հայրենասիրությունը
   Սանիտարահիգիենիկ հարցեր
   Դասղեկի ժամեր

Համագործակցել ծնողների և ուսուցիչների հետ
Ուսման գործընթացում ուսումնասիրել աշակերտների ծանրաբեռնվածությունը և նրա ազդեցությունը երեխայի առողջության վրա
Ուսումնասիրել դասարանի աշակերտների ֆիզիկական և հոգեկան առողջկան վիճակը

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն - Յուրաքանչյուր հայի համար հոգևոր հարստությունը իր հավատքն է առ Աստված, հավատքն է Առաքելական եկեղեցու հանդեպ: Այդ ամենն սկսվում է մկրտությամբ,եկեղեցում մոմավառության կուլտուրայով: Հոգևոր դաստիարակությունը փոխանցում է մեծապես բարոյական արժեքներ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն - Գեղագիտական դաստիարակության նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդումարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները,ճաշակը,իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն - Աշակերտը պետք էգիտակցիՀՀ աշխարհագրական դիրքը, հարևանների հետ մեր հարաբերությունները և ամուր կանգնի մեր սահմանների անառիկության համար: Հայ զինվորն իր սխրանքներով պետք է օրինակ լինի բոլորի համար:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն - «Առողջ ապրելակերպ» կարգախոսը ուղղորդում է ֆիզիական դաստիարակության հարցում: Աշակերտը պետք է զգալի ժամանակ հատկացնի մարզումներին,տարբեր սպորտային խաղերին: Հարկավոր է աշակերտների մոտ սեփական առողջության մասին ճիշտ կարծիք ձևավորել, անցկացնել կանխարգելիչ աշխատանքներ՝ ինչպես խուսափել վատ սովորություններից, բացատրել ալկոհոլի, նիկոտինի, թմրանյութերի և ՁԻԱՀ-ի հետևանքները մարդու օրգանիզմի վրա:

3.5 Աշխատանքային դաստիարակություն - «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն» կարգախոսով պետք է սերմանել հետևյալը՝ յուրաքանչյուր աշխատանք գովելի է և արժանի հարգանքի:

3.6 Բնապահպանական դաստիարակություն - Բնության ճիշտ օգտագործման և բնապահպանական ճիշտ միջոցառումների ընտրությունը պետք է սերմանվի դպրոցական տարիներին, որը հիմք կհանդիսանա բնության պահպանման հարցում:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ - Աշակերտի դաստիարակությունը երկկողմանի պրոցես է: Առանց ընտանիք-դպրոց կապի լավագույն արդյունքի հնարավոր չէ հասնել: Պետք է ծնող-ուսուցիչ փոխհարաբերության հիմքում լինի աշակերտի որպես մարդ կայանալու , ՀՀ քաղաքացի լինելուն և կրթված, գիտակ անձ դաստիարակելու վեհ արժեքը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Դպրոց՝ ուսման դարբնոց	05.09.23	
II	Եկեք զրուցենք	12.09.23	
III	Իմ երկրի պատմության հերոսական էջերը	19.09.23	
IV	Ճանաչենք մեր հայրենիքը	26.03.23	
V	Աշխատանքը ազնվացնում է մարդուն	03.10.23	
VI	Սովորական օրագրի արտասովոր պատմությունները	10.10.23	
VII	Ինչպե՞ս հասնել հաջողության	17.10.23	

VIII	Նրա մասին, ով ամեն օր իմ կողքին է	07.11.23	
IX	Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները	14.11.23	
X	Ինչպե՞ս սովորել միայն լավ գործեր անել	21.11.23	
XI	Վատ և լավ սովորություններ	28.11.23	
XII	Առողջ ապրելակերպ	05.12.23	
XIII	Արդարացի և անարդար արարքները	12.12.23	
XIV	Լավ մարդիկ ավելի ծատ են,քան ...	19.12.23	
XV	Սիրո և հավատարմության մասին	09.01.24	
XVI	Հայտնի և անհայտ մարդկանց հետաքրքրությունները	16.01.24	
XVII	Ինքնավստահություն և հավատ սեփական ուժերի նկատմամբ	23.01.24	
XVIII	Շրջապատողների հարգանք	30.01.24	
XIX	Ես բարկանում եմ,երբ...	06.02.04	
XX	Ինչպե՞ս լինել լավ ընկեր	13.02.24	
XXI	Ուժեղ լինել,նշանակում է...	20.02.24	
XXII	Հայտնի հայ մարզիկները	27.02.24	
XXIII	Ո՞ւմ կուզեի նմանվել	05.03.24	
XXIV	Ինչպե՞ս հասկանալ մարդկանց	12.03.24	
XXV	Իմ ընտանիքը	19.03.24	
XXVI	Ես հայ եմ	02.04.24	
XXVII	Ինչպե՞ս պահպանել Երկիր մոլորակը	09.04.24	
XXVIII	Ի՛նչ գեղեցիկ է աշխարհը	16.04.24	
XXIX	Եթե ես կարողանայի	23.04.24	
XXX	Սիրում եմ...	30.04.24	
XXXI	Կարողանալ համապատասխանել Մարդ վեհ կոչմանը	07.05.24	
XXXII	Իմ կատարած լավ գործերը	14.05.24	
XXXIII	Իմ կարողություններն ու ձեռքբերումները	21.05.24	